ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/187

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2021թ. թիվ 26-1/11532-2021 գրությամբ «Ալեքսանդր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սպիտակի համայնքապետարանի 12.07.2021թ. թիվ 034/21-1032 գրության հիման վրա, 16.07.2021թ. թիվ 26-1/11532-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/187 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Սպիտակի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Սպիտակի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.07.2021թ. թիվ 034/21-1032 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ներկայացվում է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/187 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սպիտակի համայնքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 06.05.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով Սպիտակ համայնքի կարիքների համար կանաչապատման ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կանաչապատման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Սպիտակի համայնքապետարանը «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 06.07.2021թ. թիվ 034/27-1017 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.05.2021թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագրի 1.1 կետի հաձայն՝ կատարողը ստանձնում է կանաչապատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Ընկերությանը՝ ծառայությունը սահմանված ժամկետներում մատուցելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ծառայությունը պատշաճ որակով և ժամկետներում մատուցելու ուղղությամբ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 06.05.2021թ. կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագիրը մնացորդային 3 590 450 ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (…)»:

3. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 06.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

4. Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.07.2021թ. թիվ 26-1/11532-2021 գրությունը, Սպիտակի համայնքապետարանի 12.07.2021թ. թիվ 034/21-1032 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր</u>***

հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք

վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

<u>բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:</u>

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ **<u>համապատասխան հիմքերով</u>**, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, Սպիտակի համայնքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 06.05.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով Սպիտակ համայնքի կարիքների համար կանաչապատման ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կանաչապատման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Սպիտակի համայնքապետարանը «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 06.07.2021թ. թիվ 034/27-1017 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.05.2021թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագրի 1.1 կետի հաձայն՝

կատարողը ստանձնում է կանաչապատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Ընկերությանը՝ ծառայությունը սահմանված ժամկետներում մատուցելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ծառայությունը պատշաճ որակով և ժամկետներում մատուցելու ուղղությամբ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 06.05.2021թ. կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագիրը մնացորդային 3 590 450 ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 06.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սպիտակի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 12.07.2021թ. թիվ 034/21-1032 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել թիվ «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11» պայմանագիրը, Ընկերությանն ուղղված

ծանուցումը՝ պայմանագիրը լուծելու վերաբերյալ, Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1-ը և Հավելված 2-ը:

Այսպիսով՝ Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 06.07.2021թ. թիվ 034/27-1017 ծանուցմամբ հայտնել է, որ վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ծառայությունը պատշաճ որակով և ժամկետներում մատուցելու ուղղությամբ և նշել, որ լուծում է Պայմանագիրը՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, այն է՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,*** այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը առկա չեն, որպիսի պայմաններում***

հնարավոր կլիներ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետով նախատեսված խախտման փաստը:

Միևնույն ժամանակ անդրադառնալով Պատվիրատուի կողմից, որպես Պայմանագիրը լուծելու հիմք Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը վկայակոչելուն, հարկ եմ համարում արձանագրել, որ այս մասով ևս Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլիներ հաստատել կամ հերքել, Պայմանագրի տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների խախտման փաստը և մասնավորեցնել թե որ ծառայություններն են մատուցվել սահմանված ժամկետների խախտմամբ:

Մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2021թ. թիվ 26-1/11532-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**